«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Գլխամասային Գրասենյակի, արխիվային տարածքների և մասնաճյուղերի ամենօրյա և պարբերական բնույթ կրող մաքրության և ընթացիկ սպասարկման նպատակով հայտարարված

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ (ԲԱՑ) ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏ

Կազմակերպության անվանում՝
Հասցե՝
Հեռախոսահամար՝
Էլ. փոստի հասցե՝
Կայքի հասցե՝

Բանկի կողմից ներկայացվող պահանջներ		**Մրցույթի մասնակցի կողմից լրացվող դաշտ**
Հայտատու կազմակերպությանը ներկայացվող պահանջներ	Տվյալ ոլորտում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ	
	Մրցույթը հաղթելու դեպքում Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ում Բանկային հաշվի առկայության ապահովում	
	Հաստատում, որ կազմակերպությունը ներգրավված չէ ՀՀ օրենքի շրջանակներից դուրս գտնվող ցանկացած տեսակի գործունեության մեջ	
	Կազմակերպության վերաբերյալ Բանկի կողմից պահանջվող անհրաժեշտ ամբողջական փաստաթղթերի և տեղեկատվության տրամադրում (մրցույթը հաղթելու դեպքում բանկը սպասարկող անձնակազմի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության տրամադրում)	
Ծառայությունների մատուցման ժամկետ՝	1 տարի՝ երկարաձգելու հնարավորությամբ	
Մաքրման ծառայությանը ներկայացվող ընդհանուր	Գլխամասային գրասենյակի 2 վարչական շենքերի (ընդհանուր մակերես՝6500 մ^2)	

պայմաններ և պահանջներ	ամենօրյա մաքրության իրականացում նվազագույնը 16 աշխատակցի միջոցով (16-ից պակաս աշխատակցով սպասարկումն իրականացնելու դեպքում Բանկն իրավունք ունի կիրառել պայմանագրով նախատեսված տույժեր և տուգանքներ, իսկ վերջինիս պարբերական բնույթ կրելու դեպքում՝ միակողմանիորեն լուծել պայմանագիրը) 2 հերթափոխով, այն է՝ 1.մաքրության ապահովում աշխատանքային ժամերին 2.Մաքրության ապահովում • Բանկի Գլխավոր գրասենյակում հիմնովի մաքրությունն իրականացվելու է աշխատանքային օրերին՝ ժամը 18:00-22:00, իսկ Բանկի մասնաճյուղերում՝ օրական 8 ժամյա գրաֆիկ, ժամերը համաձայնեցնելով մասնաճյուղի հետ: • Գլխավոր գրասենյակի տարածքում յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 08:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում հերթապահելու են 8 աշխատակից	
	Ամենօրյա մաքրության իրականացում մասնաճյուղերում, յուրաքանչյուրում՝ մեկ մաքրուհի:	
	Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի կողմից ընդունելի կամ վերջինիս կողմից տրամադրված արտահագուստի կրում	
	Բանկի վերանորոգվող մասնաճյուղերում՝ կապիտալ և ընթացիկ վերանորոգման աշխատանքների ավարտից հետո մաքրության աշխատանքների ապահովում՝ առանց լրացուցիչ վճարի	

	Սանիտարահիգենիկ նորմերին համաատասխան պատշաճ որակի ծառայությունների մատուցում	
	Մաքրության և ընթացիկ սպասարկման նպատակով անհրաժեշտ քանակի նյութերի ապաովում(Բանկի կողմից ընդունելի նյութերի ցանկը Հավելված 1-ում), այլ նյութերի կիրառումը պետք է կատարվի բացառապես բանկի հետ համաձայնեցնելուց հետո	
	Պայմանագրի գործողության ժամկետում՝ Գլխամասային գրասենյակում, արխիվային տարածքներում կամ մասնաճյուղերում ընթացիկ կամ կապիտալ աշխատանքների ավարտից հետո մաքրության ապահովում՝ առանց լրացուցիչ վճարի	
	Ամենօրյա, աշխատանքների իրականացման ցանկի տրամադրում՝ ըստ գրաֆիկի և ժամերի	
Բանկի տարածքների ամենօրյա մաքրման աշխատանքների ցանկ	գրասենյակային տարածքի մաքրում	
	անվտանգության և ծառայողական սենյակների մաքրում	
	ապակիների, բռնակների, վարդակների, դռների վրայից մատնահետքերի և փոշու հեռացում	
	մուտքի դռների և ապակիների մաքրում	
	բոլոր գորգային ծածկույթների մաքրում փոշեկուլով	
	սալիկների և կոշտ մակերևույթների խոնավ մաքրում	
	աստիճանավանդակների մաքրում և փոշեզերծում	
	աստիճանավանդակների մաքրում և փոշեզերծում	
	աղբամանների դատարկում, տոպրակների փոխում	
	գորգածածկույթների վրայից բծերի հեռացում	

	վերելակների պատերի և դռների մաքրում՝ հատուկ միջոցներով	
	փոշու հեռացում բոլոր սեղաններից, աթոռներից,փափուկ կահույքից, դարակներից, պահարաններից, տեխնիկայից, դռների շրջանակներից, պատուհանագոգերից, բազրիքներից,անջատիչներից, վարդակներից և այլն,	
	Պատուհանագոգի խոնավ մաքրում	
	Աղբի դույլերի և ներսի աղբամանների դատարկում (դատարկում 2/3 չափով լցված լինելու դեպքում), աղբի նետում նախօրոք համաձայնեցված տարածքում	
	բնական ծաղիկների մաքրում փոշուց	
	ափսեների, բաժակների և այլ պարագաների լվացում	
	լվացարանակոնքերի, զուգարանակոնքերի և բոլոր տեսակի սանտեխնիկական սարքավորումների մաքրում և ախտահանում,	
	Կերամիկական սալիկների, խոհանոցային տեխնիկայի մակերեսի, աշխատանքային մակերեսների, խոհանոցի սեղանների և աթոռների խոնավ մաքրում, աղբի դուրսբերում	
	հայելիների, մետաղական մակերևույթների և մյուս պարագաների մաքրում և փայլեցում,	
	Հատակի փոշեզերծում և խոնավ մաքրման աշխատանքների կազմակերպում	
	շրջակայքի և պատշգամբների մաքրում փոշուց, ձյունից, սառույցից,	
	Արտաքին պատերի լվացում, կից սալաքարերի մաքրում փոշուց, ձյունից, սառույցից,	
	ետնաբակի տարածքների մաքրում փոշուց, ձյունից, սառույցից,	

	բանկի պահանջով ձյան կույտի տեղափոխում հատուկ տեխնիկայով	
	անհրաժեշտության դեպքում տանիքներից, պատշգամբներից ձյան և կախված սառույցների մաքրում	
	շրջակայքի և պատշգամբների մաքրում փոշուց, ձյունից, սառույցից,	
	բանկի պահանջով արտաքին ֆասադի, պատուհանների մաքրում հատուկ տեխնիկայի միջոցով	
	Բանկոմատների,վճարային տերմինալների, հերթերի կառավարման սարքի շուրջը մշտապես մաքրության ապահովում, աղբամանների դատարկում,	
	Բանկոմատների, վճարային տերմինալների, հերթերի կառավարման սարքի խոնավ մաքրում, ախտահանում,	
	Ջրի սարքի փոշեզերծում, խոնավ մաքրում, կողքն ընկած բաժակների հավաքում, դույլի ախտահանում,	
	Լուսավորման սարքերի, գովազդային նյութերի շրջանակների, ցուցատախտակի հայտարարությունների մաքրում	
	Համակարգիչների փոշեզերծում, Համակարգիչների խոնավ մաքրում և Ստեղնաշարերի ախտահանում,	
	Սրահում տեղադրված էկրանների փոշեզերծում, խոնավ մաքրում	

Շաբաթական մաքրման առաջադրանքներ	Սառնարանի ներսի ախտահանում, Միկրոալիքային վառարանի ներսի լվացում, Փափուկ կահույքի ախտահանում	
Ամիսը մեկ կատարվող աշխատանքների ցանկ	Առաստաղի և պատերի փոշեզերծում և խոնավ մաքրում, Բարձրադիր կահույքի վերնամասի խոնավ մաքրում, Հատուկ տեխնիկայի միջոցով հատակների հիմնավոր լվացում, Սանհանգույցի պատերի և հատակի ախտահանում, Շերտավարագույրերի խոնավ մաքրում, Օդափոխության համակարգերի և օդորակիչների պլաստմասե դետալների մաքրում Պատուհանների ներսից և դրսից խոնավ մաքրում արտաքին և ներքին ապակյա մակերեսների ու արտաքին գովազդային վահանակների մաքրում, լվացում	
Եռամսյակը մեկ կատարվող մաքրման աշխատանքների ցանկ	փափուկ կահույքի և գորգային ծածկույթների քիմմաքրում,	
	Առաստաղի լուսատուների խոնավ մաքրում,	
	Շերտավարագույրների, գալարավարագույրների մաքրում, լվացում	
	Ջահերի մաքրում	
	Վարագույրների քիմմաքրում, կամ լվացում	

Մաքրությունը ապահովող աշխատակիցներին ներկայացվող պահանջներ		
✓ **Մաքրությունը ապահովող աշխատակիցների արտաքին տեսքի բաղադրիչներ**	• Հագուստ (կազմակերպության լոգոյով Բանկի հետ համաձայնեցված միանման հագուստ) • Կոշիկ • Վարսեր • Ձեռքերի խնամվածություն • Օծանելիք • Աքսեսուարներ • Դիմահարդարում	
✓ **Հագուստ** և **կոշիկներ**	• կրում են միատեսակ համազգեստ • կրում են դիմացից և ետևից փակ կոշիկ՝ առանց նախշերի և աքսեսուարների:	
✓ **Դիմահարդարում**	• ոչ արտահայտիչ և ոչ վառ • միայն մաշկի գույնին համապատասխան տոնային քսուկ, բաց գույնի ստվերաներկ, շրթներկ և դիմափոշի:	
✓ **Ձեռքերի խնամվածություն**	• Ձեռքերը և եղունգները մաքուր են, խնամված:	
✓ **Օծանելիքի առկայություն**	• Թույլատրվում է մեղմ հոտով օծանելիք: Չի թույլատրվում կտրուկ հոտով և առատ օծանելիք:	

✓ **Աքսեսուարներ**	• Չեն թույլատրվում երկար և մեծ օղեր, մեծ քանակի և չափի մատանիներ, հագուստի վրա ընկնող խոշոր վզնոցներ:	
✓ **Վարսեր**	• վարսերը մաքուր են, խնամված և կոկիկ հարդարված, • չեն թույլատրվում դեմքի հատվածում թափված մազեր, • մազերի հարդարանքն աչքի ընկնող չէ, • չի թույլատրվում վառ, անբնական գույնի ներկված մազեր, վառ և մեծ աքսեսուարներ:	
✓ **Հիգիենա**	• Աշխատակիցները պետք է ունենան կոկիկ և խնամված արտաքին և պահպանեն անձնական հիգիենայի բոլոր կանոնները:	
✓ **Աշխատանքային կաննոներ**	• Մաքրուհիների աշխատանքային գրաֆիկը համապատասխանում է տվյալ մասնաճյուղի աշխատանքային գրաֆիկի: • Չի թույլատրվում իրականացնել մասնաճյուղի ներքին հատվածի մաքրություն մասնաճյուղում սպասարկվող հաճախորդներին անհանգստացելով, տեղաշարժելով՝ բացառությամբ խիստ անհրաժեշտության դեպքում: • Չի թույլատրվում հաճախորդի սպասարկման ընթացքում գտնվել աշխատակցի կողքը, աշխատանքային սեղանի մոտ՝ բացառությամբ, այն դեպքերի, երբ տվյալ պահին կա խիստ մաքրության անհրաժեշտություն	

	(օրինակ բաժակ է կոտրվել, թանաք է թափվել, ջուր է թափվել): • Չի թույլատրվում հաճախորդի սպասարկման ընթացքում գտնվել մասնաճյուղի ներսի հատվածում, զրուցել հերթում սպասող հաճախորդների հետ, սնունդ կամ սուրճ տեղաշարժել, բարձր խոսել, զրուցել աշխատակցի հետ հաճախորդների սպասարկման սրահներում:	

Գնման պայմաններ

- Պայմանագիրը կնքվելու է նախնական 1 տարի ժամկետով, հետագայում 1 լրացուցիչ տարով երկարաձգել հնարավորությամբ՝ փոխադարձ համաձայնությունների և կատարողականի բավարար գնահատման պայմանով:

- Մինչև հայտերի ներկայացումը՝ հայտատուները կարող են մոտենալ Պատվիրատուի վարչական շենք և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն տարածքի, շենքում մարդկանց օրական միջինացված շարժի, կատարվելիք ծառայությունների մանրամասների, պահանջների և պայմանների վերաբերյալ՝ տեղեկատվության բացահայտման համապատասխան համաձայնագիր ստորագրելու դեպքում,
- Հայտատուն հայտով ներկայացնում է ամենօրյա ծառայությունների կատարման ժամային գրաֆիկը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի Գլխամասային գրասենյակում տարածքում կարող է մաքրման ծառայությունները մատուցել յուրաքանչյուր աշխատանքային օր՝ առավոտյան ժամը 08:00-ից մինչև 08:45 և (կամ) երեկոյան 18:00-ից մինչև 19:00: Իսկ Բանկի մասնաճյուղերում՝ օրական 8 ժամյա գրաֆիկ, ժամերը համաձայնեցնելով մասնաճյուղի հետ:
- Յուրաքանչյուր աշխատանքային օր մինչև ժամը 09:15 մասնաճյուղերի տարածքը պետք է լինի պատշաճ մաքրված վիճակում:
- Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցը աշխատանքային օրերին՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով՝ 9:00-18:00 ժամանակահատվածում, պետք է ապահովի հերթապահություն իրականացնող աշխատակիցների ներկայություն՝ Պատվիրատոփ ամբողջ տարածքը պատշաճ մաքրված վիճակում պահելու նպատակով:
- Հայտատուն պետք է ապահովի նաև առնվազն մեկ կոնտակտային անձի (այսուհետ՝ Պատասխանատու) առկայություն, որը հասանելի կլինի յուրաքանչյուր օրացույցային օր՝ շուրջօրյա:
- Հատուկ պահպանվող տարածքներում մաքրման ծառայությունները պետք է իրականացվեն Պատվիրատուի տարածքում համապատասխան, գործող ընթացակարգերին:
- Մաքրմանն ծառայությունների ընթացքում օգտագործվող լվացող-մաքրող նյութերը, մաքրող և փայլեցնող կտորները, աղբի տոպրակները, զուգարանների թղթերը,
- օդի ավտոմատ թարմացուցիչների համալրող միջոցները, հեղուկ օճառը, թղթե սրբիչները և մաքրման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ բոլոր սարքերը, սարքավորումները և այլ միջոցներն ու պարագաներն ամբողջությամբ տրամադրվում են հայտատուի կողմից: Սանհանգույցի յուրաքանչյուր խցիկում հայտատուն պետք է ապահովի մշտական զուգարանի թղթի, օդի ավտոմատ

թարմացուցչի, իսկ յուրաքանչյուր լվացարանի մոտ՝ թղթե սրբիչների և հեղուկ օճառի առկայություն համապատասխան տարայով/ում (դիսպենսեր):

- Պայմանագրի գործողության ընթացքում օգտագործվելիք բոլոր նյութերի, մաքրող միջոցների, հիգիենայի և այլ պարագաների փոփոխությունները պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի հետ: Յուրաքանչյուր մակերես պետք է մաքրել կամ լվանալ հատուկ դրա համար նախատեսված մաքրող կամ լվացող միջոցով,
- Հայտատուն պետք է փոխհատուցի իր կողմից պատճառված նյութական վնասը,
- Հայտատուն պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում՝ ըստ մաքրման ծառայությունների մատուցման ժամանակացույցի, շտկել իր կողմից չմատուցված ծառայությունը: Չմատուցված ծառայությունների շտկումը պետք է իրականացվի խելամիտ ժամանակահատվածներում.

Մրցույթի մասնակցի կողմից նմանօրինակ ծառայություն մատուցող այլ կազմակերպությունների տվյալներ

Հ h	Կազմակերպության անվանումը	Պատասխանատու անձի Ա.Ա.	Կոնտակտային տվյալներ
1.			
2.			
3.			
4.			
5.			
6.			
7.			

ԿՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանումը	Թերթերի քանակը
1.		

2.		
3.		
4.		
Ընդամենը		

Հայտատու՝ _____

ստորագրություն Կ.Տ.